

քանի որ այդ հայրերը չափ անգամ անտես են անում, ոտնատակ են տալիս այդ օրհներգերը: Ո՞վ է մեղաւոր այդ բանում, էլ ինչ հայրեր են գրանք, որ չեն կարողանում իրանց հօտի վրա տանութիւնը ձեռք բերել...

Տգէտ ծխականը այս հարցի վերաբերմամբ, ինչպէս համարեա ամեն դէպքում, իր իրաւունքները չէ ճանաչում, եւ մեր հոգեւոր հայրերը չեն բացատրում ծխականի իրաւունքները: Երեւի ձեռնտու չէ, այն ժամանակ ոչ կարելի կը լինի խուզել, ոչ էլ կ'իյնէ հաւատացեալ հօտը...

Համարձակ կարելի է ասել, որ զեռ 12 տարի առաջ մեր գաւառի հայ եկեղեցիները ունեցել են ինչ թէ 32 հազար ռուբլի, այլ մօտ 50—60 հազար, իսկ ներկայումս՝ երեւի 70 հազար՝ չը հասնում տոկոսները եւ այն գումարները, որոնք, ըստ խառնուրդի կուլ գնալով, ընթացիկ հաշիւներէից դուրս են ձգել:

Սակայն միշտ, յիշուի, այսօր գումար կայ եւ քրտեղ են պահում այդ հազարները: Եւ կայ, եւ չը կայ: Պետական գանձարանում մեր գաւառի հայ եկեղեցիներէից ոչ մէկը մի կօպէկ անգամ չունի. բայց մի եւ նոյն ժամանակ եկեղեցիներէից շատերը հազարներ ունեն, եւ երէց-փոխները հազարներ հաշիւներ են ստանում եւ տալիս միմեանց: Բացատրենք այս առեղծուածը:

Տասնեակ տարիների ընթացքում երէցփոխները կամ անմիջապէս իրանք են անպատիժ կերպով վատնել եկեղեցական փողերը եւ իբրեւ թէ պարտ մնացել եկեղեցուն, որ մինչեւ հիմա էլ զեռ պիտի վճարեն, կամ եկեղեցական գումարները ապօրինի ձեռով պարտք են տուել իրանց այս կամ այն անապահով ազգականին ու խնամունք—առանց օրինաւոր դոկումենտների կամ հասարակ ձեռագրաբերով, չը նայած որ պետական օրէնքը խիստ արգելում է եկեղեցական փողերը ձեռագրաբերով պարտք տալ մասնաւոր անձանց: Սակայն այդ ձեռագրաբերի մեծ մասի տարւոյ վաղեմութիւնը անցել է եւ չը նայած դրան, նրանք դեռ իրանց գոյութիւնը պահպանում են, փող են համարում եւ «գաւթարներում» կարծած անցնում են երէց-փոխից երէցփոխի...

Մի եւ նոյն ժամանակ վաշխառու երէցփոխների անձնական մուրհակները ժամանակը երբեք չեն կորցնում, չարունակ նորոգում, չարունակ բազմապատկում են գումարները...

Երբեմն էլ պատահում է, որ եկեղեցու աղքատիկ պարտապանից վերցնում են նրա մի քանոտ ձին կամ էլը, եւ անս տեղից վերկենողը, մանաւանդ գիւղական տէրտէրը, երէց-փոխը, տանուէրն ու դատաւորը, այնքան են հեծնում ու բռնում եկեղեցապատկան, իսկապէս անտէր, գրաստները, որ նրանք ստուծում են... Ի հարկէ, այսպիսի երեւոյթներ տեղի չէին ունենայ, եթէ օրինաւոր հսկողութիւն, հաշուետուութիւն լինէր:

Տասնեակ տարիներ առաջ Ալաթուման փոքրիկ գիւղի եկեղեցին 2000 ռուբլի է ունեցել: այժմ այդ գումարը չը կայ. յայտնի չէ, թէ ինչպէս եւ երբ է հալվել, կուլ գնացել: Եթէ հետաքրքրվուի լինէր, գիւղացիները ձեռք պէտք է ուղարկեն գերեզմանոցում պառկած հին «ա»

ծնը: Հարկաւոր է եւրօպական հասարակութեանը մի լրագիր, ուր գտնեն անկեղծ տեղեկութիւններ զանազան երկրների հասարակական կեանքի մասին. հարկաւոր է եւրօպական կարծիքին մի օրգան, որ պաշտպանէ իրաւունքի եւ ազատութեան դատը:

«L'Europeen» ցանկանում է ծառայել այդ նոր պահանջներին եւ այդ դատին:

«L'Europeen» քաղաքականութեան, ինչպէս եւ բոլոր խնդիրների մէջ, «L'Europeen» պէտք է հետեւի այն սկզբունքին, թէ le droit prime la force (իրաւունքը ջնջում է ոյժը): Նա յարգում է բոլոր ազգութիւնների իրաւունքը եւ աւանդութիւնները, ինչ եւ լինի այդ ազգերի թուական կարեւորութիւնը եւ ոյժը. այդ յարգանքը հիմքն է այն միջազգայնութեան, որ նա դաւանում է:

«L'Europeen» ցանկանում է ազատութիւն, արդարութիւն, խաղաղութիւն: Նա հետաքրքրվում է բոլոր այն թէֆօրմներով, որոնք ձգտում են ապահովել ամենքին, թէ ազգերին եւ թէ անհատներին, հնարաւորութիւն՝ վայելիլու գիտութեան կատարած առաջադիմութեան պտուղները:

Սրտանց ցանկանում ենք, որ «Քրանսիական նոր թերթի» այս հանգանակ հաւատարմորէ իրաւործիւի Շարլ Սէյնօքսի պէս ղեկավարի եւ ժերմիկի Պաստիի պէս աշխատակցի աջակցութիւնը մեզ գրաւական կարող է լինել գործի աջողութեան մասին:

Թոռակախների (երէցփոխների) մօտ—լուծ ենք, որ Արագոյա գիւղի խարխուլ եւ փակված եկեղեցին 8000 ռուբլի ունի: Ո՞ւր է այդ գումարը, ում ձեռքին է, ինչպէս է պահվում: Ինչպէս է, որ այդպիսի եկեղեցական գումար ունեցող գիւղը հիմա գուրկ է եկեղեցուց:

Իսկ ներկայ հաշուետուութեամբ հետաքրքրվողներին խորհուրդ ենք տալիս կարող այս տարւոյ «Մշակ» № 56-ի՝ իմ ընկեր պ. Զաւակեցու «Գիւղացու ցանքը» վերնագրով բանասիրական, ուր, ի միջի պլուք, դուրս է բերված Գանձա գիւղի եկեղեցու մուտք ու ելքի հաշիւը: Տես՝ թէ ինչպէս օրը կէսօրին գողութիւն են անում եւ զեռ յանգցնում են սրբաբոծել այդ գողութիւնը «աջնամարտ» եւ այլ անուններով, չը նայած որ հոգեւոր իշխանութիւնը խիստ արգելել է «աջնամարտ» վերցնել եկեղեցական գումարներէից: Զր պիտի ձեռքը համբուրել եւ զեռ փող էլ տալ, այն էլ եկեղեցական գումարներից, այս ինչ ենիւրուութիւն է: Էլ չենք յիշում ինչ որ մասնաձեւեր արտադրել տալու եւ այլ ֆիկտիւի նպատակներով փող զլլելը, գիւղացու ձեռքով ձրի ճանապարհորդելը, որ թանգ է նստում մանաւանդ տգէտ տիրացուների վրա, որոնք «ի հաշիւ ապագայ բարիքների» թէ՛ ձր են տալիս եւ թէ իրանք ոտքով ուղեկցում էին գործակալներին գիւղէ գիւղ:

Տեղական աղմկահարուցիւմ արդէն սկսել է ուշադրութիւն դարձնել մեր եկեղեցապատկան գումարների պահպանման ձեւի եւ կուլ գնալու դէպքերի վրա. սակայն պէտք էր, որ հոգեւոր իշխանութիւնը աւելի չափ դարձնէր այդ բանի վրա: Լաւ է ուշ ջանք երբեք: Փանի զեռ բոլորովն ուշ չէ, գուցէ հոգեւոր իշխանութիւնը կարողանայ մեր եկեղեցապատկան գումարների գէթ մի մասը կորուստից ազատել եւ մի քանի քրեական գործ սկսել եւ կեղեցական սեփականութիւնը յափշտակողների դէմ, որ խրատ լինի ներկայ եւ ապագայ երէց-փոխների համար: Վերջապէս ժամանակ է կանոնաւոր հաշուետուութիւնը օրէնք դարձնել, երէցփոխը, եթէ նա աւելիստ ահ եւլ անձնաւորութիւն է, միշտ էլ կարող է գողութիւն անել, զեռ ճարպիկութեամբ անուն էլ վառտակել՝ նոյն իսկ կանոնաւոր հսկողութեան ժամանակ, ուր մնաց թէ ներկայ անտէրութեան օրերում: Կիրում ենք, հաշուետուութիւնը, հրակողութիւնը եւ պատասխանատուութիւնը անհրաժեշտ են. իսկ ժողովուրդը պէտք է աշխատէ անպայման վատնելի, մարտը եւ անշահաւոր անձերին երէցփոխ ընտրել: որոնց կարելի լինի ժողովուրդի սուսիկ-փուսիկ, նոյն իսկ երբեմն ծածուկ գանձանակի մէջ ձգած կամ մոմալվանաւորութիւնից ստացած կօպէկները հաւատալ, որոնց վրա կանոնաւոր հսկողութիւնը համարեա անկարելի է:

Բացի մի քանի հազար ռուբլուց, որ մեր գաւառի հայ ազգաբնակիցները ամեն տարի տալիս է իր կողպատկող, անշուք եկեղեցիներին, այդ նոյն ազգաբնակիցները տարեկան մօտ 6000 ռուբլի արդիւնք է տալիս էլիմիանին: Դա ոչ մի տեղ չէ երևում, որովհետեւ էլիմիանը սովորութիւն չունի հաշիւ տալու այն ժողովուրդին, որի կօպէկներին են գոյանում այդ

նոյն չաբաթաթերի № 4-ում, ծերունի Թ. Պաստիի զետեղել է մի ողբերգական յօդուած «Ի՞նչն է տխուր պատերազմի մէջ» վերնագրով, որն անկարելի է կարդալ առանց իրապէս յուզվելու:

«Պատերազմի մէջ տխուր ինքը պատերազմը չէ, այլ նրա հետեւանքները, մանաւանդ բարոյական հետեւանքները: Մարդիկ կոտորված, դաշտեր՝ ամայացած, կոթողներ՝ կործանված: Թշուառութիւնը, սովը, ժանտախտը, այդ աւելուկները հետեւանքը, յարկըրում են առատութեան, աշխատութեան եւ առողջութեան: Սոսկ կայի է, սոսկալի է մանաւանդ նրա համար, որ մարդիկ իրանք են իրանց ձեռքով իրանց գլխին բերում են այդ աղէտները:

«Բայց փոթորիկները, երկրաշարժները, հրաբուխների ժայթքումները, հեղեղները նոյնպէս ախտում են անբուժելի եւ կործանում: համարձակ հիւանդութիւնները յաճախ այնքան գոհն են հնձում, ինչքան պատերազմը: Մարդկութիւնը աղքատացել է եւ նուազել, բայց չէ ապականվել: Նա այն մարդու նման է, որի ստացած մի ծանր վէրքը արւունքի մի մասը կորցնել է տուել, բայց մնացած արւունք վարակված չէ: Պատերազմը, սակայն, արւունք անել չէ, ինչպէս արգաբանում են. նա թունաւորում է: Նա, քաղցութեան, անձնուիրութեան եւ հերոսութեան գործերի կողքին, որոնց կարող է տեղիք տալ, մի եւ նոյն ժամանակ ստուկութեան, բռնութեան, աւարի, անգթութեան ամենօրեայ

հազարները. եւ ոչ գիտե՞ բայց դրանից՝ որքան են «ուտում», մինչեւ որ այդքանը հասնում է էլիմիանին, որը, ինչպէս ասացինք, նշինքն է հաշիւ տալիս, ոչ էլ իր ստորագրեալ անհատներից ու հիմնարկութիւններից է հաշիւ պահանջում: Ապա իւրաքանչիւր տարի Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն եւ սրա կալուածներին վաշխառու կապտաւորներին տալիս է տասնեակ հազարներ... Եւ ինչ է տալիս մեր հոգեւոր իշխանութիւնը այս բոլորի փոխարէն իր հօտին Այն, որ ոչնչացնում է իր ժողովուրդի հաւատը, վատնում թիւներ, ջերմեանդութիւնը՝ հէնց ի վնաս իր շահերի:

Ասիականութիւնը հզօր պետութիւններ է կործանել, ուր մնաց թէ մի թույլ եկեղեցական վարչութիւն: Փանի զեռ ուշ չէ եւ մեր հոգեւոր վարչութիւնը վերջնականապէս չէ կազմալուծվել, պէտք է մեր հոգեւոր կառավարութեան գործակալութեան մէջ միանգամից ընդմիջել եւրօպական կարգեր ու ձեւեր մտցնել: եւ այդ բանը ամենից շատ մենք սպասում ենք եւրօպայում կրթութիւնը ստացած մեր հոգեւոր երիտասարդ կառավարիչներից: Անկասկած դեռ ժուար է ասիական միջնորդող միանգամից թաւաղանքը, դժուար է նորից վատնում թիւները: Ներհնչել յուսաբեկ ժողովուրդին եւ միանգամից ոչնչացնել շահաւէրների եւ փառամոլների պատճառած անտարբերութիւնը եւ հիասթափութիւնը, բայց անկարելի չէ. միայն եւսանդ եւ անկեղծ վերաբերմունք է պէտք դէպի ժողովուրդի շահերը: Հէնց այդ պատճառով էլ մեր հոգեւոր վարիչները պէտք է ազատվեն ժողովուրդի շահերին նուիրված ժողովրդական թաւաղ ուժերի վերաբերմամբ ունեցած նախապաշարմունքներից եւ զնահատեն նրանց անկեղծ ցուցմունքներն ու խորհուրդները եւ ինչ թէ նրանց «ճշգրտ» հակառակը անեն, չարունակ դէպի անդունդը դրոյվեն...

Սալիւստան

ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, դեկտեմբերի 27-ին, վրաց դեռատանական խումբը պ. Գեղեվանովի (Միւրադեան) բէնէֆիսին ներկայացրեց Մօլիերի «Տարտիֆը»:

«Տարտիֆը» ֆրանսիացի հանձարեղ թատերադրողի այն ստեղծագործութիւններիցն է, որ իր մշտնադեմ թարմութեամբ համաշխարհային րէպերտուարի թանկագին զարդերից մէկն է կազմում: Ինչպէս Մօլիերի կատակերգութիւններից շատերը՝ սա էլ բոտ էութեան այսպէս կոչված բնաւորութեան կատակերգութիւն է, որի մէջ սակայն գործողութեան մի նուրբ, ճարտարաւեստ հիւսուածքով մարմնանում են եւ տիպ եւ անհատականութիւն: Մօլիերը միշտ հաւատարիմ իր սկզբունքին—je prend mon bien où je le trouve—առհասարակ հետեւելով ֆանտաստիք-րոմանտիկական հակումներից եւ իր կատակերգութիւններին նիւթը վերցնում էր սովորաբար իրականութիւնից, կեանքի ետուն հոսանքից: Նրա սրտան, խորթափանց հայեացքից չէ վրիպել մարդկութեան բազմաւոր եւ գոյնզգոյն խաւերից եւ ոչ մի ներկայացուցիչ—եւ իշխան եւ աշնուական, եւ

դաս է: Առաջ մարդիկ կուռում էին իրանց իրաւունքների պաշտպանութեան համար կամ նրա համար, ինչ որ իրաւունք են համարում. բայց այժմ կուռում են՝ կուռելու վայրենի հաճոյքի համար: Առաջ սպանում եւ հրդեհում էին պաշտպանվելու համար, այժմ սպանում եւ հրդեհում են՝ սպանելու եւ հրդեհելու համար: Առաջ կուռում էին թշնամի կառավարութիւնների դէմ, այժմ կուռում են խաղաղ ժողովուրդի դէմ, կատաղում են կանանց եւ երեխաների դէմ:

Դատաւարտելով գերմանացիների 1870-ին կատարած, եւրօպացիների Չինաստանում եւ անգլիացիների Տրանսկապուս գործած գաղաւնային գործերը, Թ. Պաստի աւարտում է յօդուածը:

«Պատերազմը մարդկային խղճմունքի ապականութիւնն է, նա անբարոյականացումն է en grand, նա աւերումն է աւելի մեծ բանի, քան հարստութեան եւ կեանքի,—չնշումն արդարութեան, պատել եւ դիմութեան որ եւ է զգացումը. նա գազանի զարթոնումն է այն բոլորի մէջ, ինչ որ մարդ էին կարծում: Եւ դրա համար պատերազմի վրա պէտք է ծանրանար, համաշխարհային անէծքի հետ միասին, Կայէնի անքաւելի ոճրի անսահման դատապարտութիւնը:

Կօպէնհագէնի համալսարանը այս դեկտեմբերի 4-ին ջուէարկեց տարեկան 6000

հասարակ քաղաքացին եւ բժիշկ եւ հոգեւորական եւ կին եւ այլն: Նա մի անխնայ ճշմարտախոսութեամբ մերկացրել եւ կծու հեգնութեամբ շանթաւարել է մարդկային բնաւորութեան զանազան թերութիւնները: Բայց այս մեծ թէպիստի նպատակը հեգնել չէ, այլ կրթել: Այս է պատճառը, որ Մօլիերի ամենահղինալեւոր յարգողներից մէկը՝ Գեօթէն, էկկերմանի հետ խօսելիս՝ նրան անուանում է մի մաքուր, իսկական մարդ: Միւս կողմից ֆրանսիացի մի յայտնի քննադատ՝ Սէնտ-Բէօլ իրաւացի կերպով նկատում է, որ Մօլիերը անհամեմատ աւելի լուրջ է քան կատակաւոր: Նրա սիրած լի է խորին թախիծով, բայց միաժամանակ եւ իսկական ջերմութեամբ, նա ծագրում է, հեգնում է մարդկութիւնը, բայց միաժամանակ, մի բացառիկ ինքնատիրապետութեամբ, սիրում է նրան: Սա գուցէ մի մեծ հակասութիւն է, բայց մի հակասութիւն, որ միայն ազնիւ հոգիներին է յատուկ: Իբանք նոյնպէս ծագրում է մարդկութիւնը, երբեմն նոյն իսկ ամենակծու հեգնութեամբ, բայց սիրով ջերմացնող ճառաբանութիւնը շատ աղօտ են նրա մօտ:

Մօլիերը իր այս ճշմարտաւոր եւ հեգնող ոգին՝ կրթելու ազնիւ բաւականութեամբ համակված՝ Տարտիֆի մէջ գործնել է շատ տաղանդաւոր կերպով: Տարտիֆը կրասիական կեղծաւորութեան տիպարն է, եւ այնքան հանրաճանօթ, որ վաղուց արդէն անկասկի կերպարանք է ստացել: Ամենաբնորոշն այն է, որ Մօլիերը կրծական բարեպաշտութեան համադրեալի տակ թաղնված կեղծաւորութիւնն է մերկացնում—այսինքն կեղծաւորութեան տեսակներից ամենատարբեր եւ ամենախտանդաւորը:

Պատմութեամբ ենք, որ մենք վրացերէն միայն մի քանի բառ ենք հասկանում, բայց խաղն ընդհանրապէս բաւական կենդանի անցաւ, այնպէս որ առանց ձանձրանալու կարող էինք հետեւել նրա ընթացքին: Պ. Գեղեվանովի Տարտիֆը շատ մաւածված էր եւ խելօք. աչքի ընկնողն այն էր, որ պարօնը երբեք չէր դիմում չափազանցութիւնների եւ ինքը չէր ծաղրում իր սեփական գրքը—ինչպէս այդ անուշ մի միջակ Տարտիֆներից շատերը: Պարոնի միմիկան գովելի է, այն ինչ ձայնը մեզ վրա մի քիչ մօնօտօն տպաւորութիւն թողեց: Պարոնը վարձատրվեց բուն ծափահարութիւններով եւ ստացաւ մի մի երկու նուէր: Յաւալի է պ. Միւրադեանի պէս գերասանին տեսնել հայկական բեմից հետո:

Միւս դերակատարները գոհացուցիչ էին. պ. Արաշէի Օրգոնը շատ լաւ էր: Թատրօնը համարեա թէ լի էր:

Վ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱՆԱՆԻՑ

Դեռ եւս Աստորիանում չը լաված եւ չը տեսնված դէպքի հանդիպելի այսօր Պետրոս Պօղոս եկեղեցուն: Ի՞նչ,—բանաւոր ծանուցումն էր անում, թէ այդ օրը ժողով է նշանակված՝ քաղաքիս կատարինէ եկեղեցու Ղեւնդ քա-

րօնի մի գումար ի նպատակ հոգաւոր գրող Գեօրգ Բրանդէսի: Համալսարանի այդ քաղաքաշահութիւն է ստացել այն պատճառով, որ Գ. Բրանդէս, ինչպէս յայտնի է, երկար տարիներ հայածված էր յետադէմ եւ կրեթական կուսակցութիւնների կողմից, որոնց ձեռքումն էր գտնվում երկրի կառավարութիւնը: Կատողի կոկի էր մղվում նրա դէմ, իբրեւ ազատամտականի եւ նոր մտքեր տարածողի, այնպէս որ նա ստիպվեց փախչել իր հայրենիքից եւ ապրել Բերլինում 1877—1882-ին: Սակայն նրա հիանալի գրածները քննադատական դրականութեան մասին լայն տեսնում: Կօպէնհագէնում եւ հոգեւոր նրա անունը, նրա գործած աղբերգութիւնը իմաստական երիտասարդութեան վրա ոչ միայն Դանիայում, այլ հիւսիսային ամբողջ երկրներում, անաղի էր: Զը նախկին դրան, նա իր մարկերի երկրում պաշտօնապէս չէր ճանաչված իբրեւ հանձարեղ եւ մեծ գրող եւ համալսարանում նրան զանաւոր էին ամբիօն տալ:

Այժմանս պատուաւոր նպատակ—ասում է մի լրագիր—միայն հին անարդարութեան ջնջումն է, եւ ոչ թէ պ. Բրանդէսին պէտք է չնորհաւորութիւններ ուղղել (որոնց նա պէտք չունի), այլ Դանիային, որ այժմ վերջապէս այնքան լաւատու կառավարիչներ ունի, որոնք գիտեն հակել իրանց հայրենիքի պարտականութեան եւ պատուի վրա:

Հ. Առաքելեան

Թարգմանիչ «Moniteur Oriental» լրագրին
ուսմ էր, որ թարգմտանքը, որ Արարատա-
րի ընդհանուր նախնադպանն էր, ետանդու-
ն ծնունդով ինչ էր ցույց տալիս եւ աշխատու-
մարդ պահանջներ այդ նախնադուր Արար-
տանում տեղի ունեցող բոլոր երեւոյթներ-
ին ճիշտ տեղեկութիւններ ունենալու հա-

Електропечатня Груз. Издат. Т—ва. Б.—Ванкская ул.